

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ, 2006-ԲՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիսիոյ համար Տարեկան 12 ֆր.
» վեցամսեայ 6 ֆր.
» երեսամսեայ համար (երկու քիւր մեկ ծառայ) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
» մեկ քիւր » 2.60 տոյ, վեցամս 1.50
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն զրկիդ հետեւեալ հասցեով
ԽՐԱՎՈՒՆԿԻՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍԽՆԱ (Պոլիսիա)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Iravounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն/ եւ չեն զրկուիր եւ յարմար դատաւար- ները միայն կը հրատարակուին աւ- րոյցովի կամ մասամբ:
Մանուցման տողը 20 սանթիմ. երե- փեւ ունի մեզման համար 20 0/0 զեղչ կը չիւնի:

ՆՈՐ ՌՈՒՄԲԵՐ

Անցեալ օր թայնդ հազարդեց թէ կ. Պոլսոյ Ղալաթիոյ կողմը մեծ քանակութեամբ ռուսներ յետ նուաճ են, որոնք ժէօն թիւրքե րու կը պատկանին հզեր:

Մեզ այնչափ հաւանական չի թուիր ժէօն թիւրքերու կողմէ մեծ քանակութեամբ ռուսներ պատ- րաստուած ու Պոլիս ներմուծուած ըլլալու լուրը. աւելի հաւանական է որ այդ ռուսները թիւրք ոստի կանութիւնը ինքը պատրաստած ըլլայ. սրպէսզայ այդ պատրաստուած կաշառակերութեան նոր դուռ մը բանայ եւ անթուշակ միացող լրտեսներու բանակին ապրաւտի միջոց հայթայթուի:

Այս հաւանականութիւնը իրողութեան մը մօտեցած կը նկատուիք այլ եւ, երբ նորագոյն լուրեր կը հաստատեն թէ Պոլիս շատ մը նոր ձերբակալութիւններ տեղի ունեցած են. «Ա. Բօշթա» պուլիսիական թերթը կը հազարդէ թէ նոր ձերբակալութեան մեծ մասամբ հայեր են, որոնց մէջ երկու հայ աղջիկներ ալ կան:

Ըսինք թէ ժէօն թիւրքերու ռուսներ պատրաստած ըլլալը հաւանական չի թուիր մեզ. Որով հետեւ այդ անունով ճանչցուած թիւրքերը՝ որ երկու խմբակի կը պատկանին, գործնական ոչ մէկ քայլ առնելու տրամադիր չեն երեւիր:

Մէլիքեթին պատկանող խմբակ կը արդէն իր վերջին խօսքը ըսած է գրեթէ. այսպէս

«Ապանիան, Մակեդոնիան, Սուրիան եւ փոքր Ասիան քսան տարիներէ ի վեր սքանչելի համբա- րատարութիւն ցոյց տուին Ապտիւլ Համիտի հաստատած զգուշի վարչութեան բոլոր թշնամանքին, վայրագութեանց եւ կշտամբանքին տոկալով, գեռ քանի մը տարի ալ թող սպասեն: Ապտիւլ Համիտ ան մահ չէ երբեք եւ իր վարչութիւնը իրեն հետ պիտի կործանի: Այն ատեն Սահմանադրութիւնը պիտի վերահաստատուի եւ կոյսութեան բոլոր ժողովուրդները իրենց իմաս-

տութեան պտուղները պիտի բաշխեն:

Յեղափոխական կուսակցութիւն մը որ իր օականով Համիտին մահուն սպասեցէք կրտէ. յայտնի է թէ, զէնքի ու ռուսների հետ բնաւ գործ ունեցած չի կրնար ըլլալ:

Իսկ «Օսմանլը» խմբակին գալով, սա թէեւ գործելու տրամադրութիւններ յայտնեց, սակայն միշտ թուով զրա միացին:

Տամատ Մահմուտ փաշա, որ այս խմբակին պետ հռչակուեցաւ, հակառակ իր յայտարարութիւններուն, տակաւին ոչ մէկ զրակուն ապացոյց չի տուաւ իր գործունէութեան: Իր խօսքերուն պղտորան կան ըլլալուն մեծք այն ատեն համազօրեցանք, երբ սա իր սքանչալութեամբ կը յայտնէր Ահմետ Բիգայի պէս մեղի, թուլամորթ եւ ինքնակոչ յեղափոխականի մը: Միւր այս համոզումը աւելի զօրացաւ, երբ Տամատ փաշա արտասահման ելնելէ վերջ — հայկական կոռուրածներու ատեն իր պարզ հանգիստեա մնալու ոճերը չի քաւած — հայ յեղափոխականներուն միտքի մեծ ըրաւ. որով իր եւ իր կուսակցութեան միտքի գործելու անկարող լինելուն ապացոյցը տրուաւ: Վերջին շարժումներու մէջ առնուած լուրերն կը հաստատեն թէ Տամատ Մահմուտ փաշա Եգիպտոսէ կը բանակցի Երեւանի հետ, իրեն միջնորդ ունենալով իւր տիւր եւ կամ ուրիշ բարձրաստիճան անձնակազմութիւններ:

Երեւանի հետ համաձայնի փորձող կուսակցականի մը ռուսներու եւ ռուսականներու հետ գործ ունեցած լինելը բնաւ հաւանական չի թուիր մեզ:

Ուստի կը կրկնենք, վերջերս Ղալաթիոյ կողմէն գտնուած ռուսները հաւանաբար թիւրք կառավարութեան մէկ խաղն է, որով իրեն առիթ կ'ստեղծէ նորանոր ձերբակալութիւններ ընելու, եւ միւս կողմէ Եւրոպացուց ցոյց տալու թէ երկրին մէջ անիշխանական շարժումներ կան, զորս զսպելու համար խիստ միջոցներու գիծի պարտաւորուած է. հետեւաբար ձեռք առնուած այդ խիստ միջոց-

ներուն զեռպաններու կողմէ կոտորածի նոր պատրաստութիւններն կատարելը սխալ է:

Համիտական խորամանկութիւն մըն է այս, որ մէկ գնդակով երկու թռչուն զարնել կը փորձէ միշտ:

Գոռպէր

ԹՂԹՎՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա, 25 փետր.

Այսօր 22ին, հինգշաբթի օր, Աղզային արտակարգ ժողովը բացուեցաւ. Եր ունի եւ ունեցաւ իր շատ մը արտակարգ կողմերը: Օգրգեցիկ. բազմութիւնը թէ դուրսը եւ թէ ներսը տարօրինակ, Պոլիսի տարեգրութեանց մէջ եղակի. 20-30 հազար հոգի պալատէն դէպի Ոսպրանիէ ճամբուն վրայ շարուած անհապիղ կը դիտէին անցնող դարձողը, գրեթէ ամենու հետաքրքրութեան տարական է Քարապէլօֆը, որ 15-16 տարիներէ ի վեր հեռի պաշտօնազարմութեան այսօր օրուան մարդն է, Նախարարացեալ է:

Հրաւիրելուց մէջ բազմութեան ուշադրութիւնը կը գրաւէր Պոլի կարաքանակ Հրէից խախտապետը իր աղջային կրօնական տարազով: Տարօրինակ էր Մէհմեդէ Էֆէն. տիւր ընթացքը, միջոցառ ամեն հրաւիրեալ բաց կառքով կերթար կուզար դիտելու եւ դիտուելու համար անշուշտ, սա գոց փայտաշէն անցաւ դարձաւ. վախ մ'ունէր արգիօք, թէ Համիտը ներկայացնելուն կամչնար:

Բայց իշխանին գնացքը տմեշուն վրայ լեմոն քամեց. շատ փայլուն եւ շատ շողշողուն. աւելորդ է նկարագրել, զի որչափ ալ գրեմ, կը վախճամ որ չպիտի կրնամ այն գաղափարը տալ, զոր կրնայ ունենալ միայն ոչքով տեսնողը:

Ժողովարար հր մտաւ իշխանը Նախարարացեալին եւ Նախարարաց ընդունելութեամբ, կուսակիցներու անվերջ ծափահարութեան մէջ, որ ցարդ անոր քաղաքական հա-

կառավորներն ու քննադատներն էին:

Երկու տարի առաջ, Գրէքով — Ռատուլովի օրով, երբ սովորական աղջային ժողովը բացուեցաւ առաջին անգամ, սոյն այդ հակառակորդներն էին, որ ծափ մ'իսկ զլացան իշխանին. չեմ կարծեր որ ուշադիր մէկը մոռցած ըլլայ եւ այս առթիւ իշխանին ծուռ նախաձեռնութիւնը մը մեկնումը. մինչդեռ այսօր այս մարդիկ են, որ զինք կընդունին ամենայն հանդիսաւորութեամբ:

Իշխանն անձամբ բացաւ ժողովը. գահաճառին առաջին տողերը շատ տարօրինակ երեւցան. նա խորդ ժողովոյ լուծման եւ փոփոխութեան պատճառները, բնաւ, արդէն ամենուր յայտնի են, ինչ են այս պատճառները եւ ո՞վ գիտէ. հարցնելու է նոյն իսկ Երես փոխանաց:

Պոլիսիոյ տղաւորաբէին կառավարութեան հետ ունեցած եւ ունենալիք սերտ բարեկամութեան վրայ ալ մասնաւորապէս շեշտեց. երկրորդական տեղը կը բռնէին ուրիշ եւ զրացի տէրութեանց հետ կեցած եւ ունենալիք յարաբերութեանց խօսքերը. հեղե սա Տաճիկին համար մասնաւոր անհարկութիւն մը չկայ, մինչդեռ վերջին ժողովոյ բացման ճառին մէջ մասնաւոր տողեր չառյուծած էին:

Արգիօք բաներ մը կը դառնան թէ պիտի դառնան քաղաքական հորիզոնին վրայ:

Ապաքէն այսօր ռոշաֆիլ նախաբարութիւն մ'ունինք, ո՞վ կրնայ ըսել, որ նախորդները ռոշաֆիլ էին:

Ամենէն զարմանալին այս է, որ հանդէպ այդ ամենուն, չունինք կուսակցութիւն մ'ալ, որ ինք միակ ժողովոյ մէջ մեծամասնութիւն ունենայ:

Քարապէլօֆիտները, Յանգօֆիտները, Երկրագործականները եւ Սթոյիլիստները եթէ միանան յանժամ պիտի կրնան ունենալ սոյն օրինական մեծամասնութիւնը:

Սակայն այսօր ամենուն բերանն է, որ Սթոյիլիստները աղջայնա

կանք, պայմանաւ պիտի օգնեն նա խարարութեան և արդարեւ սուսա- նորգի տրոց խնդրոյն մէջ. եթէ ջնջուի, պիտեճէի խնդրոյն մէջ եթէ խնայողութիւն ըլլայ, փոխա- ութեան մը խնդրոյն մէջ, եթէ այս առանց նիւթական երաշխա-ւորութեան ըլլայ, արտաքին քա-ղաքականութեան մէջ՝ եթէ բոլոր տէրութեանց հետ հաւասար բարեկամական յարաբերութիւն մշա-կուի:

Տարօրինակ երեւոյթներէն է որ առաջին օրն իսկ կառավարականք պոռացին գոռացին Սթամպուլու փոստները, առանց ինկատի տանելու, որ իշխանը ժողովարարահէն մեկնած պահուն Ռաշա Բէթրովին ձեռք տուաւ և խնդում երես որ պիտիութիւնը հարցուց:

Տարօրինակ չառնեմք արդեօք և սա երեսոյթ, որ թիւրք երես- փոխանք աւելի Սթամպուլու փոստ կերեւին քան կառավարական հական-ւան թիւրք տարրին ցարդ բռնած հին քաղաքականութեան, որ միշտ կառավարութեան կողմը բռնած է լաւ թէ գէշ:

Պռավօ Մէհմետ, ուր այսչափ յաջողութիւն գտնէ ձեռք բերած է արդի պարագայից մէջ:

Այս երեւոյթներու մէջ ալ կար-ծեմ տարօրինակ պիտի ըլլայ, ե-թէ ես ալ այժմէն սր եւ է գիտո-ղութիւն և գուշակութիւն մ'ընեմ նոր նախարարութեան կենաց եւ գործունէութեան նկատմամբ, թէ որչափ պիտի ապրի և ինչե՛ր պի-տի ընէ:

Այս տարօրինակ երեւոյթներէն է և պատ. թերթիք վերջին թի-ւին մէջ հրատարակուած Սօփիայի թղթակցութիւնը, զոր վերապահու-թեամբ հրատարակած էիք:

Շիտակը այսպէս պաշտպանողա-կան կենացս մէջ ոչ կարգացած եմ և ոչ լսած. կերելի որ թէ հասակով և թէ խելով կարճ մար-դու գրուածք է այդ. ուստի չար-ժեք պատասխանել, զի խօսք չու-նիմ և չեմ ուզեր ունենայ մարդոց հետ, որ օր ցերեկով արեւին գո-յութիւնը, անոր երեւումը կուրա-նան:

Աւելորդ չեմ համարիր միայն սա ըսել, որ նախ խորհինք և ա-պա գործենք, որպէսզի չիտեւու-տեղ չաւրենք:

Կ. Պ.

Ծ. Խ. — Սօփիայի մեր մասնա-ւոր թղթակիցը ամեն շաբթու պի-տի հաղորդէ մեզ կառավարական, քաղաքական և ազգային բոլոր անցուղարձեքը ու մեր ընթերցող ներք շահագրգռող պետական կար-գադրութիւնները:

ԱԶԳ- ԿԵԱՆՔԵՆ Ի ԲՈՆԱԹԱՆՑԱ

Բարեգործական ընկերորթներ և իր-անդրանիկսարեղարձք. — Ինկասու Ազգ-վարժարանի երեկոյթը — Վարդանանց Հանդիսը. — Հանի Մասրէսու Հանի

Համբարձումեանի մահը. — Առեւտրե- Տարի մըն է, Գօնսթանցայի մէջ հաստատուած է ընկերութիւն մը, հայ երիտասարդներու նախա-ձեռնութեամբ և «Բարեգործական Ընկերութիւն» անունով:

Սոյն ընկերութեան նպատակն է՝ աղքատներու օգնել, ընթերցա-րան մը բանալ և կալուած գնել Ազգային հաստատութիւններուն համար նիւթ միջոցները ներքին:

Ուրախալի է ըսել թէ, ընկե-րութիւնը՝ իր գոյութեան այս միջոցին մէջ, ըստ բաւականի յա-ռաջդիմութիւն ցոյց տուաւ: Ազ-գային վարժարանի պերնասարհը, որ ամենագեղեցիկ սրահներէ մին Գօնսթանցայի, իր ընդարձակու-թեամբը ու մանաւանդ իր ծովա-հայեաց դիրքովը, ի շնորհս Ընկե-րութեան, համեստօրէն զարդա-րուած է, ու իբր ընթերցասրահ ընկերութեան տրամադրութեան տակ դրուած: Ընթերցարանը այժմ կըստանայ մերձաւորապէս 20-25 տեսակ թերթեր. ունի հա-մեստ մասնաշարան մը՝ օրէ օր ճոխանալու վրայ, ուր կը հաւա-քուին առ հասարակ ամեն գտա-կարգի աղգայիններ կարգալու կամ ունկնդրելու համար ատենաբանու-թիւններ, որոնք կանոնաւորապէս, ամեն կիրակի տեղի կուենան:

Ընկերութիւնը, ամեն ջանք յանձն տուաւ, ու իր հիմնարկու-թեան տարին դեռ չի բոլորած, կրցաւ քաղաքիս աղքատներուն ալ օգնութիւն հառցնել Ս. Ծննդ-եան և այլ առիթներու:

Ինչ որ ամենէն փափաքելին է, միութեան կապը եղաւ ան, թէ՛ տեղացի, թէ՛ պանդուխտ հայուն, թէ՛ հարուստ, թէ՛ աղքատ ազ-գայինին:

Ընկերութիւնը իր վարչութիւնը կազմած է ինը անձնաւորութիւն-ներէ:

- Ղ. Կոնիկեան Ատենապետ
- Յ. Ինճիճեան փոխ-ատենապետ
- Ճ. Ալթունեան Ատենադպիր
- Յ. Չէլիկեան » և գրապահ
- Յ. Պէնիկեան Գանձապետ
- Գ. Անթոնեան Հաշուակալ
- Մ. Լօքմանեան Քննիչ
- Ղ. Պահլաւունի Խորհրդ, անդամ
- Կ. Գրիգորեան » »

Ընկերութեան հաստատման տա-րեղարձի օրը, յունվար 1ը, հան-դիսաւոր Ս. Պատարագ կատար-ուելէ յետոյ, տեղի ունեցաւ ըն-կերութեան միամեայ գոյութեան հանդէսը:

Ընթերցարանը լի էր երկսեռ բազմութիւնով մը, որոնք փութա-ցած էին մասնակցել սոյն հանդէ-սին ու բարոյապէս քաջալերել ըն-կերութիւնը:

Ղ. Կոնիկեան բացաւ հանդէսն ատենաբանութիւնով մը, ուր պար-զելէ յետոյ, առ հասարակ ընկե-րութիւններու բարոյական ունիւ-թեան օգտակարութիւնը հասա-րակութիւններու մէջ, ցոյց տը-ւաւ գործնականապէս թէ՛ ինչ

օգտակարութիւն կրցաւ և կրնայ ունենալ Բարեգործական ընկերու-թիւնը Գօնսթանցայի ազգայնոց կեանքին մէջ, զանոնք մղելով թէ՛ թշուառներու նկատմամբ՝ դէպի գլխութիւն և թէ՛ օրէ օր զարգա-նալու ազատ երկրի մը մէջ, իր-բեւ պատուաւոր և բարի քաղա-քացիներ:

Ուրախալի էր մանաւանդ, երբ Կոնիկեան յայտարարեց թէ՛ տեղ-ւոյս օրիորդներն ալ մեծ փափաք յայտնած էին մասնակցել, Բարե-գործական ընկերութեան, անոր օժանդակ ճիւղ սը կազմելով:

Վերջացնելով իր խօսքը, խորին շնորհակալութիւն յայտնեց, ի գի-ւնց ընկերութեան թէ քաղաքիս և թէ Ռուսմանիոյ այլ քաղաքնե-րը բնակող այն աղգայիններուն, որոնք հաճած էին, Նոր տարւոյ առթիւ իրենց նուէրներով, նիւ-թապէս քաջալերել ընկերութիւնը բոլոր արդիւնքը եղած էր մերձա-ւորաբար 800-1000 ֆրանք: (*)

Այս առթիւ խօսեցան Տ. Նալ-պանտ և ուրիշ պարոններ, որոնք ամեն կերպով ջանացին խրախու-սել ընկերութիւնը:

Հանդէսին մասնակցեցան նաեւ Ազգ. վարժարանի երկսեռ աշա-կերտները, ներգաշնակ երգեցողու-թեամբ, իրենց երաժիշտ ուսու-ցիչ Տ. Յ. Չէլիկեանի առաջնոր-դութեամբ:

Հանդէսը փակուեցաւ Տ. Դա-տաւորեան հօր պահպանիչով:

Սոյն հանդէսին փառաւորու-թիւնը գործնական ապացոյցը ե-ղաւ այն համակրանքին, զոր քաղաքիս աղգայինները ունէին Բարեգործ. ընկերութեան նկատ-մամբ:

Ընկերութեան վարչութիւնը, օգ-տուելով սոյն քաջալերութենէն, որոշեց երեկոյթ մը սարքել ինը-պատտ Ազգային վարժարանին:

Եւ հակառակ ամեն գիտարու-թիւններու և սուղ ժամանակի, փետրվար 4 ի կիրակի երեկոյին, առաջին անգամ ըլլալով, տեղի ու-նեցաւ Ազգային սոյն երկոյթը, ընթերցարանին մէջ:

Ուր քաղաքիս թէ՛ հարուստ և թէ՛ համեստ ընտանիքները հաճե-ցան ներկայ լինիլ, իբր նահապե-տական մեծ տան մը անդամները ի մի խմբուած:

Վարչութիւնը սոյն երեկոյթին համար վարձած էր զինուորական նուագախումբը, և ամեն ջանք գործ դրած էր անոր փայլունու-թեան համար, որով իրապէս գոհ և ուրախ եղան ներկաները:

Ինչպէս նախորդին նոյնպէս և այս տարի, չքեղօրէն կատարուե-ցաւ Վարդանանց հանդէսը:

Բոլոր հայ վաճառատուները և

(*) Կարեւորագոյն պարտք մը կա-տարած պիտի ըլլայ ընկերութիւնը, եթէ Հայաստանի որբերուն ալ բա-ժին մը հանէ իր այս հատկութիւն:

խանութները գոց մնացին նոյն օ-րը մինչև երեկոյ: Եկեղեցիին երկ-սեռ հոծ բազմութիւնը Ս. Պա-տարագի աւարտումէն յետոյ, առաջնորդուեցաւ ընթերցարանը, որ չքեղապէս զարդարուած էր:

Գծուած ծրագրի համեմատ, նախ վարժարանի երկսեռ աշա-կերտներու կողմանէ երգեր և ոտա նաւորներ արտատանուեցան, ապա Ղ. Կոնիկեան ատենաբանութիւն մը ընելով, նախ վարդանանցի պատերազմին հակիրճ պատմութիւ-նը ըրաւ, ապա, յուզումի մեծ թափով մը ազգային ներկայ կեանքը համեմատելով Վարդանանց շրջանին հետ, ցոյց տուաւ թէ՛ աղբը ալ աւելի վտանգաւոր միջո-ցի մը մէջ կը գտնուի այսօր քան երբէք, որուն դարմանին համար, մէկէ աւելի Վարդանանցը պէտք կայ:

Խօսեցան նաեւ Տ. Տ. Նալպանդ, Ռոմաներէն լեզուով, Յ. Ինճիճեան արձակ քերթութեամբ մը Ասատուրեան Յարութիւնեան ապա, Տ. Ե. Գրի-գորեան, Թաղ. Խորհրդոյ հրա-ժարեալ Ատենապետը, խօսեցաւ նախ նոյն օրուան հանդիսարու-թեանը մասին, ապա անցնելով Թաղ Խորհրդոյ նուր ընտրութեան մասին մաղթեց որ, նորընտիրը ըլ-լայ այնպիսի մարմին մը, որ ալ աւելի հոգ տանի Ս. Եկեղեցւոյ և վարժարանի պայծառութեան և յառաջդիմութեան:

Տէր Հօր պահպանիչովը փակուե-ցաւ հանդէսը. ու ներկայք քաղ-ցըր տպաւորութիւններով մեկնե-ցան:

Անցեալ Թունուար ամսոյ մէջ, կարճ հիւանդութենէ մը յետոյ, մեռաւ, քաղաքիս երեւելի վաճառա-կաններէն, Հաճի Մատթէոս Հաճի Համբարձումեանը, 70 տարեկան հասակին մէջ:

Հանգուցեալը մեծ դիրք մը դրու-ած էր արեւտրական հրապարակին վրայ: Ոչ նուազ համակրանք և մեծարանք կը վայելէր նաեւ ազգա-յին շրջանակին մէջ ալ. իբր բա-րեկաշտ հայ մը, միշտ օգնող մը եղած էր ամեն ազգային հան-գանակութիւններու:

Հանգուցեալին մահէն յետոյ, իր վշտահար կիներ, այրի Տիկին Զա-րիֆ Հաճի Համբարձումեան ի յի-շատակ իր ամուսնոյն նուիրեց 1000 ֆրանք տեղւոյս Ս. Եկեղեց-ւոյ, 350 ֆրանք քաղաքիս աղ-քատներուն 200 ֆր. Պօլոյ Ազգ-հիւանդանոցին, 50 ֆր. քաղաքիս բարեգործական ընկերութեան:

Մեծ շուքով կատարուեցաւ հան-գուցեալին յուղարկաւորութիւնն և թաղումը. դադարին վրայ դամ-բանականներ խօսուեցան:

20 փետրվար Սիսակ
Պօկսարանցաւ

ՄԵՐԱՅԻՆՔ

Հարաւերկոյ մարտ 2 ժամը 9ը քառորդ տնցած քաֆէ վոլթէ ըի վերի որահներէ միոյն մէջ տեղի ունեցաւ Հայկական փոքրիկ երեկոյթ մը ընդ նախագահու թեմաթ Պ. Մինաս Չերաղի :

Պ. Նախագահը նախ խօսք տըլաւ երգեցիկ խմբին որ — բաղկացած 8-10 հոգիներէ — երգեց անմահ Ալիշանի «Բամբ որոտան» ոգեւորիչ բայց դժբաղդարտոր հասարակ մահկանացուներու «Ժողովրդին» անհասկնալի (գրաբար լինելուն համար) երգը : Թետոյ խօսք առաւ Ռուսահայ Պր. Միքայէլ Յովհաննէսեանը և խօսեցաւ մեր վերջին 10 տարուան պատմութեան վրայ : Բաւական անկողմնակալ սահուն և հարտար ոճով և գաղափարներով : Պ. ճառախօսը մօտ քսան վայրկեան աւերկալաւ խօսեցաւ : Պոփից հայ երիտասարդութեան 5-6 տարի առաջուան խանդն ու եռանդը , պախարակեց և կամ աւելի ճիշդը մատնացոյց ըրաւ անոր և առ հասարակ հայերու այսօրուան անտարբերութիւնը , յուսահատութիւնը , անգործութիւնը : Միքանի անգամ ծափահարութեան արժանացաւ յարգելի բանախօսը , որ իր խօսակցութիւնը վերջացուց Պ. Չերաղին մի քանի գովասանական խօսք ուղղելով :

Ճառախօսութեան յաջորդեց դարձեալ երգեցողութիւն «Ով դու բարեկամ , և մեր Հայրենիք» : Թետոյ Պ. Չերաղ խօսք առաւ և մօտ մէկ քառորդ ժամու չափ խօսեցաւ ու բազմութեան վրայ լաւ տպաւորութիւն թողուց : Բաւականին խնդացուց պատմելով մէկ դար առաջուան կ. Պոլսոյ Հայոց կեանքէն զանազան անցքեր և կէտեր , Պէրլինի վեհաժողովին ներկայ եղող Հայ Մէլիքներու նիստ ու կացը ևր :

Երեկոյթը վերջացաւ Բամբ Ռ. որոտանի կրկնութեամբ և Ձէյթունի մարշերով :

Հակառակ այն անհիմն կարծիքին թէ Հայերը անտարբեր են , առ հասարակ հաւաքումներու , այդ երեկոյթին ներկայ էին մօտ 60 , որոնցմէ 8-10 կը պատկանէին իզական սեռին : Արական սեռին պատկանողներէն մեծագոյն մասը երիտասարդներ էին :

Ներկայ ամօսոյ մարտ 23ին ալ երեկոյթ մը տեղի ունենալու է Բարիզի մէջ դարձեալ հայերու կողմէն տրուած : Սա աւելի մեծ և լուրջ լինելու է պիտի բաղկանայ մեր ստացած հաստատ տեղեկութեանց նայելով երկու մասերէ նուազահանգէս և պարահանգէս որուն համար վարձուած է Բարիզի ամենաշքեղ սրահներէն մին : Սոյն երեկոյթը տուողն է Բարիզի հայոց Բարեգործական ընկերութիւնը :

Այս առթիւ անտեղի չէ կարծենք երկու խօսք ըսել այդ բարեգործական ընկերութեան վրայ , որ այսօր ինչպէս կանոնաւոր ընկերութեանց կարգին մէջ է մտնու : Հիմնուելով մօտ 8-10 տարի առաջ այս ընկերութիւնը բաւական նպատակներ հասուց Բարիզ եկող աղքատներու անոնց դրամական և ուրիշ նիւթական օգուտներ հասցնելով , սակայն ընկերութիւնը կեդրոնաւորի մը չունէր , իւր նիւտերը ֆինանսական վիճակը , կարգ ու կանոնները չուտ անկանէն էին , այնպէս որ եկաւ ժամանակ մը որ ընկերութիւնը միայն երկու հոգիներու թելին վրայ մնաց և քիչ մնաց որ ոչնչանայ :

Բարեբաղդաբար ներկայ տարւոյս Յունուար ամիսէն սկսած այդ ընկերութիւնը բոլորովին վերակազմուել է հաստատ հիմանց վրայ , ունի լաւ դիւան մը կեդրոնաւորի մը , խորհրդարան : անդամներ , պատուոյ նախագահ վեհապետ քահանան , հոգեւոր առաջնորդ Բարիզի հայոց , Այսպէս կանոնաւորուելով ընկերութիւնը Բարեգործական բոլոր հայերուն համակրութիւնը վաստակած է և այսօր անոր կաշկարցին ամենքն :

Բարիզ Ս. Պ.

ՓԱՌՔ ԻՐԱՆԻՆԻՔԻ ՏՈՒՇԻՆ

Տ. Ճանկիւլեանի ի պատասխան Երուանդ Սրմաքէշխանեանի «Բացատրութիւն մը» վերնագրի տակ գրածը կարգացինք «Շաւիղ»ի մէջ :

Երուանդ Սրմաքէշխանեան իրեն արգարացումի երկու կէտ կը բռնուի ընտրած է , զոր սա կերպով կարելի է ամփոփել :

Թէ Շարժումի Շ.ն ինք չէ , այլ Շաւապը . և թէ դիմակաւորները Շաւապի ներփողկանէն շատ վերջը հասած է իրենց , թէն ինչպէս ինք կրտէ , ձեռագիրը շատ կանուխ տեսած է եղեր :

Ընդունելով թէ Դիմակաւորները «տպուած» վիճակի մէջ շատ ուշ հասած է իրեն , չէ որ ձեռագիրը շատ կանուխ տեսեր է : Ըսել է թէ Դիմակաւորները՝ վատ թէ լաւ , իր տպաւորութիւնը թողած էր Շարժումականներուն վրայ , երբ այս վերջիններէն Շ. կատորագրէր իր հաշակաւոր ներփողկանը , այնքան ուռուցիկ բացազանչութիւններով , Շ. Տ. Ճանկիւլեանի կրանիզէ արձանը կը շինէր ու հոգիին ցղեբերը կը տեսնէր դիմակաւորներուն թէ ոչ տպուածը , գէթ ձեռագիրը տեսնել , կարգաւ ու ինչ ինչ պարբերութիւններու տակն ալ գիծ քաշիլէ յետոյ՝ ըստ իրեն : Այն , սա երբեմն է . շատ անգամ Շ. Երուանդ Սրմաքէշխանեանը որչափ ալ ծիծաղելի է իր պաշտպանողական ճառերուն մէջ :

Գալով Շ.ին Շաւապ և ոչ Շաւապ ըլլալուն — բան մը որ ստուգելու անկարելիութեանը շնորհիւ իբր թէ փախուստի լաւագոյն ճամբայ մը տուեր է խեղճին — ես պահ

(*) Թէեւ երբ Տ. Ճանկիւլեան վառ

մը պիտի ընդունիմ նոյն իսկ թէ Շ. Շաւապն էր , բայց այն առնելով ինչի պիտի տամ Պոլիս ու հոս խմբագրատուններուն դռները չլքտացող պարոնին սա ամեն նատարական ճշմարտութիւնը թէ «խմբագրութիւնը ամեն կերպով պատասխանատու է այն գրութիւններուն , զոր կը հիւրընկալէ իւր թերթին մէջ առանց ու եռ է դիտողաբեան» :

Ուստի ինք՝ որ Տ. Ճանկիւլեանի անունը յուզւածով յիշատակող Շ.ի երանելի օրերուն մէջ միակ խմբագիրն էր — Տիրէթօրը ուրիշ , քօլապօռաթօռն ալ պիտապիշ քիչն ուրիշ — ինքն էր , որ Շ.ով Տ. Ճանկիւլեանի ճակտին պսակներ կը հիւսէր ու տարիներ վերջ նոյնպէս ինքն էր , որ Երուանդ Սրմաքէշխանեանով , անոնց տեղ անանդաւանելի մակդիրը տեղափոխուել կը ջանար հակասութիւն : Բան մը , որուն ցուցադրութեամբ Տ. Ճանկիւլեան լաւ ապտակեց զինքը «Իրաւունք»ի էջերուն մէջ :

Ու յետոյ , ինչո՞ւ անանդաւանելի Տ. Ճանկիւլեան . անոր համար , որ ճակատագրական տեսն մը պըխերիկներու մէջ պահուրտելու վատութիւնը չունեցաւ անիկա — անկանջը խօսի Արեւելքի Երին — ու արհամարհեց կախաղանի չուանը յայտնի քաջութեամբ . անոր համար , որ վեց ու կէս երկար տարիներ լսեց չլթային շառաշիւնը մութ բանտերու մէջ գնահատելի հարձակատարութեամբ մը . անոր համար , որ դեռ վերջին օրեր Որբախնամ մը հաստատեց և այսօր քսան քսանհինգ որբեր կ'ապրին այդ Որբախնամի շնորհիւ , Հայրենիքի մէջ :

Բայց ո՞ր ամօթ , ո՞ր Երուանդ Սրմաքէշխանեան . կը փրկի իր ու կը փրկի և Ճանկիւլեանը «տգէտ է ու կը տառապի» կը պոռայ իր կիսամաշին մէջ :

Ճանկիւլեան՝ երբ ըսեր էր թէ ինք զարգացած մարդ է ու տառապանքներ չունի . ինչո՞ւ կը մոռնայ Ճանկիւլեանին սա պարկեշտութիւնը , որ գոնէ ճանչցած չէ իմաստակութեան չընկալի , ուր շատ երուանդ Սրմաքէշխանեաններ կը վխտան , մէկը՝ իր անիմաստ բառախաղերուն , միւսը՝ իր աֆիօն ու հաշիշ իրար չփոխող գիտական անմասն ճառերուն — ի չնալ լիցի սուտիկէ տօքթէօրը — և մէկ ուրիշն ալ՝ իր մագիստրոսական ոտիկասութիւններուն շնորհիւ , ինչո՞ւ կը մոռնայ թէ ինք Ճանկիւլեանէ մը աւելի կը տառապի . . . ու մինչեւ անգամ — ա՛յն , ինչ սոսկալի բան — պաշտելի ցրիէն կը հրաժարի արտասուք ու առիթը չունենար իր հայհոյանքները տաք տաք հրամցունելու հասարակութեան , վասն զի՝ ինչպէս կը տեսնուի «բացատրութիւն մը» գրուածքէն , Երուանդ Սրմաքէշխանեան քեդալիլն առած լմացած մըն է ալ ևս :

Փառք «Իրաւունք»ի տուչին , Դեւ ոչ դէն

Նա դալուն այդ ներփողկանը խօսակցութեան առարկայ դարձնել է իր եւ Սրմաքէշխանեանի միջեւ , այս վերջինը , սակայն , չէ հոռւել չափել Տ. Ճանկիւլեանի կարծիքը ևս խորին համակերպութեամբ ընդունելու է , որ ինքն է Շաւապը հեղինակ այդ գրութեան : Մ. Յ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարական «Բօլքա» թերթը Եւրոպական թերթերէ առնելով հիմացն է թէ , վերջերս Պոլսոյ մէջ գտնուած ռուսներուն հետեանօք որոնց յէօն — թիւրքերու պատկանելի ըսուած էր , թիւրքերու հետ մէկտեղ բազմութիւն հայեր ալ ձեր բակալուած են , որոնց մէջ երկու հայուհիներ ալ կան :

— Ուստի մէջ (Մ. Նահանգ) խորհրդի քաղաքացիներու ընդհանուր ժողով մը գումարուած է , խորհրդակցելու համար թէ ինչ միջոցներով կաշիլ է բարոքել խորհրդի կրթական վիճակը : Ու «խորհրդ քաղաքի կեդրոնական վարժարանի ուսումնասիրաց միութիւն» անունով ընկերութիւն մը կազմուած է որուն նպատակը պիտի ըլլայ նոյն քաղաքին մէջ բարձրագոյն կրթարան մը հաստատել : Եթէ անդամներէ բաղկացեալ վարչական խորհուրդ մը կազմուած է :

— Խորհրդի մէջ անցեալ տարի 1500 էն աւելի փոքրիկ տղաքներ կարմրախտի զոհ գացած են :

— Արաբկիրի առաջնորդ Տ. Մուշեղ վարդապետ չափահասներու համար կիրականորեալ ձրի դասախօսութիւն մը հաստատած է :

— Ուսգրի եկեղեցւոյն մէջ ալ ի յիշատակ Մամուրեանի հանգիստուր Պատարագ և հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն կատարուած է :

— Վանայ մէջ միսիօնէրները երեկոյեան տեսնախօսութիւններ ընելու սկսած են ժողովրդեան :

— Թոքախտաւոր պանդուխտ աղքատ մը Բուսնուքի թաղ . խորհրդոյ յանձնարարութեամբ ներկայացած է տեղւոյս թաղականներուն , սրպէսզի զինքը Պոլիս ղրկելու համար չոգենաւի տոմսակ մը ճարեն , որ կէս գնով 5 — 6 ֆրանքի կարելի է առնել : Պարոն թաղականները ըստ իրենց սովորականին անկարեկիր կը գտնուին և Որբախնամին գնա՝ կըսեն : Խեղճ հիւանդը օրերով փողոցները պիտի մնար եթէ զթասիւրտ անձինք իրեն պառկելու տեղ չոյց չը տային : Ամեն ոք գիտէ թէ եկեղեցին աղքատաց համար մասնաւոր պնակ ունի . բայց մէկը չի գիտեր թէ այդ պնակէն հինգ սանթիմ աղքատի մը տրուած ըլլայ :

Խեղճ աղքատ — հիւանդը մինչեւ այս վայրկեանիս գլխոտ անձի մը կարեկցութեանը կ'սպասէ : Թուեց հիւանդանոցը զինքը մեր ժած է իր ախտին պատճառաւ : Թաղ խորհուրդը «աղղը ստակ չունի որ քեզի ճամբու ծախք տանք» ըսած է : Հոս տեղն է հարցնել թէ աղքատաց պնակի ստակներն որ աղքատին տուած են կամ ինչ նպատակի ծառայեցուցած են :

Անշուշտ ամեն նուէր իր նպատակին պէտք է ծառայէ , որքինը որ բին , աղքատինը աղքատին . բայց մեր թաղականները այդ տարրական սկզբունքն ալ չեն գիտեր յարգել :

